# ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՍՏԱԲԱՆ ԵՐՎԱՆԴ ՎԱՐՈՍՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

15.10.2018 14:43

Փաստաբան Երվանդ Վարոսյանը օրեր առաջ հերթական անգամ ապատեղեկատվություն է ներկայացրել հանրային պաշտպանի գրասենյակի ծախսերի առնչությամբ:

Նա հայտարարել է, որ «տարեկան շուրջ 50 միլիոն դրամ հատկացվում է ոչ թե հանրային պաշտպանի գրասենյակի ծախսերը հոգալու, այլ փաստաբանների պալատի աշխատակազմերին վճարելու համար»: Այնուհետև, Երվանդ Վարոսյանը մեղադրել է արդարադատության նախարարությանը, այս հարցում անտարբերություն դրսևորելու համար:

Նախքան նյութի բովանդակությանն անդրադառնալը, կցանկանայինք հիշեցնել ընթերցողներին, որ փաստաբան Երվանդ Վարոսյանը 2013 թվականի հոկտեմբերի 4-ից սկսած ՀՀ փաստաբանների պալատի նախագահի, խորհրդի անդամների և աշխատակազմի նկատմամբ դժգոհելու, քննադատելու, ծաղրելու և ապատեղակատվություն ներկայացնելու քաղաքականություն է վարում: Դրանք բազմաթիվ են, կսահմանափակվենք վկայակոչելով նրա կողմից անձնական բնույթի հայցադիմումներ ներկայացնելը, իր պատասխանատվության ենթարկվելը սահմանադրական բարեփոխումների հետ կապված ճնշում ներկայացնելը, ծաղրանքները և այլն: Եթե քննադատությունը կամ դժգոհությունը օգնում են ցանկացած կառույցի իր թույլ տված սխալները տեսնելու և շտկելու համար, ապա ծաղրանքն ու սուտ տեղեկությունները չեն կարող որևէ կերպ օգտակար լինել: Պետք է նշենք նաև, որ ՀՀ փաստաբանների պալատի նախագահը, խորհրդի անդամները և աշխատակազմը Երվանդ Վարոսյանի նկատմամբ միևնույն է պահպանում են հարգալից և օբյեկտիվ վերաբերմունք:

ԱՄՆ-ի դեսպանատան նախաձեռնությամբ և Ամերիկյան իրավաբանների ընկերակցության ջանքերով բազմաթիվ քննարկումների արդյունքում ներդրվել է հանրային պաշտպանի գրասենյակի ամերիկյան մոդելը: Նշված մոդելը հնարավորություն էր տալիս կենտրոնացված կարգով ապահովել անվճար իրավաբանական օգնության տրամադրումն ամբողջ ՀՀ տարածքում՝ հսկողություն և վերահսկողություն իրականացնել որակյալ իրավաբանական օգնության տրամադրման, արդյունավետ պաշտպանության և կարգապահության նկատմամբ:

Հանրային պաշտպանի գրասենյակը (ՀՊԳ) գործում է 2006 թվականից: Տարեցտարի աճում է ՀՊԳ-ի գործերի թիվը: Դա պայմանավորված է մասնավորապես հետևյալ գործոններով՝ (1) քրեական, քաղաքացիական և վարչական գործերի թիվը տարեցտարի աճել է, (2) իրավաբանական օգնություն տրամադրելու որակը բարձրացել է, (3) օրենքով ավելացվել են այն խմբերը, որոնք իրավունք ունեն դիմել ՀՊԳ-ին քաղաքացիական և վարչական գործերով, (4) քրեական գործերով, բացի անվճարունակության չափանիշից, գործում է արդարադատության շահի չափանիշը, որի հիման վրա վարույթն իրականացնող մարմինները որոշում են անձին ապահովել անվճար իրավաբանական օգնությամբ:

Համեմատության համար նշենք, որ ՀՊԳ-ն 2013 թվականին՝ ունեցել է 3.129 քրեական գործ և 363 քաղաքացիական (վարչական) գործ, իսկ 2017 թվականին՝ 5.890 քրեական գործ և 5.864 քաղաքացիական (վարչական) գործ: Այսինքն, վերջին հինգ տարվա ընթացքում ծանրաբեռնվածությունը քրեական գործերով աճել է մոտ 90 տոկոսով, իսկ քաղաքացիական գործերով՝ մոտ 1.520 տոկոսով: Մարզերում հիմնվել են գրասենյակներ, հասարակության լայն շրջանակի համար ապահովվել է ՀՊԳ-ին դիմելու տեղեկատվությունը և անվճար իրավաբանական օգնության մատչելիությունը: Ընդ որում, այս հինգ տարիների ընթացքում հանրային պաշտպանների հաստիքների քանակը՝ 49-ից ավելացել է միայն 5-ով (54):

Ներկայումս գործող կարգավորումն այսպիսին է. Յուրաքանչյուր տարի բյուջեից հատկացվում են միջոցներ Հանրային պաշտպանի գրասենյակի գործունեությունն ապահովելու համար: Տրվում է որոշակի գումար, որը նախատեսված է հանրային պաշտպանների աշխատավարձի համար: Այսինքն՝ կա կայուն աշխատավարձ և աշխատավարձային ֆոնդի 30 տոկոսի չափով գումար է հատկացվում ՀՊ գրասենյակի ծախսերի փոխհատուցման համար՝ տրանսպորտային ծախսեր, տարածքների վարձակալության վճարներ, տեխնիկայի ձեռք բերում, օժանդակ աշխատակազմ և այլն: Նշված միջոցները համեմատած ՀՊԳ-ի կողմից վարած գործերի քանակին բավականաչափ սուղ են, սակայն կենտրոնացված ծախսերը հնարավորությունն են տալիս խնայելու որոշակի միջոցներ, արդյունավետ աշխատելու և իր առջև դրված խնդիրներն իրականացնելու համար (օգնականներ, հաշվապահություն և այլն): Այս տեսակետից եթե դիտարկենք, ապա մեկ գործի վրա պետությունը

ծախսում է նվազագույն գումար: Ավելացնենք նաև, որ նշված 30 տոկոս գումարը չի թույլատրվում օգտագործել հանրային պաշտպանների աշխատավարձի կամ լրացուցիչ հավելավճարների վճարման ուղղությամբ:

Տեղեկացնում ենք նաև, որ ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմը բաղկացած է 24 աշխատակցից՝ չհաշված ՀՊԳ աշխատակազմը: Համեմատության համար հիշեցնենք, որ 2012 թվականին փաստաբանների պալատի աշխատակազմը բաղկացած է եղել 23 աշխատակցից՝ չհաշված ՀՊԳ աշխատակազմը:

Նշված 24 աշխատողներից 10-ը համաֆինանսավորվում են ՀՊԳ աշխատակազմի համար նախատեսված բյուջեից՝ 50 տոկոսի չափով: Ընդ որում, համաֆինանսավորվող աշխատակիցների աշխատանքային գործառույթների 50 տոկոսից ավելին առնչվում են ՀՊԳ գործունեությանը: Օրինակ, համաֆինանսավորվող աշխատակիցներից են ֆինանսական տնօրենը, գլխավոր հաշվապահը, աշխատակազմի ղեկավարը, ընդհանուր դեպարտամենտի ղեկավարը, վարչատնտեսական դեպարտամենտի ղեկավարը, պարետ-էներգետիկը, մատակարար-պահեստապետը և այլն:

Այս քաղաքականությունը համաձայնեցված է եղել ՀՀ արդարադատության նախարարության հետ: ՀՀ փաստաբանների պալատի և ՀՀ արդարադատության նախարարության միջև 2018 թվականի համար կնքված պայմանագրում հստակ արձանագրվել է, որ հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության ապահովման հետ կապված ծախսերի մեջ ներառվում է նաև ՀՊԳ հետ առնչվող աշխատակազմի վարձատրությունը:

Հատկանշական է, որ այս քաղաքականությունը սկիզբ է դրվել մինչև ՓՊ նախագահ Արա Զոհրաբյանի պաշտոնավարման սկզիբը, և Երվանդ Վարոսյանը, որպես խորհրդի անդամ առիթներ ունեցել է այս քաղաքականությունն ամրապնդող հաստիքացուցակի փոփոխություններին կամ լրացումներին կողմ քվեարկել:

Ինչ վերաբերում է տրանսպորտային միջոցներին, ապա ՀՀ փաստաբանների պալատին պատկանող 3 տրանսպորտային միջոցներից երկուսն ամբողջությամբ օգտագործվում են հանրային պաշտպաններին տեղափոխելու համար, իսկ 3-րդ տրանսպորտային միջոցը սպասարկում է հիմնականում փաստաբանների պալատի ղեկավար անձանց (նախագահ, ֆինանսական տնօրեն,

գլխավոր հաշվապահ, ՀՊԳ ղեկավար և այլն), ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ հանրային պաշտպաններին: Փաստաբանների պալատի նախագահին աշխատավայր ներկայանալու և գնալու ժամանակ չի օգտվում տրանսպորտային միջոցից, քանի որ աշխատանքի վայրին մոտ է բնակվում:

Միաժամանակ հասկանալի չէ, Երվանդ Վարոսյանի՝ որպես փաստաբանի, մոտեցումը, քանի որ համաֆինանսավորման հարցը դուրս գալու դեպքում, նշված 10 անձանց աշխատավարձի հանրագումարի 50 տոկոսի չափով գումարը վճարվելու է փաստաբանների անդամավճարների հաշվին:

ՀՊԳ ղեկավարին չորս տարի ժամկետով ընտրում է ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը՝ ՓՊ նախագահի ներկայացմամբ: Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել փաստաբանների պալատի նախագահի ներկայացմամբ Փաստաբանների պալատի խորհրդի կողմից՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով, կանոնադրության մեջ նշված կոնկրետ հիմքերի դեպքում: ՀՊԳ ղեկավարն անկախ է ՓՊ նախագահից:

ՀՀ փաստաբանների պալատի

Հանրային պաշտպանի գրասենյակի

ղեկավար՝ Մելանյա Առուստամյան

**Առաջարկվող նորություններ**

**20.10.2014**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐԻՆ

**29.10.2014**
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

**30.10.2014**ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ‘ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԱՋԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ’ ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ

**07.11.2014**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼ Է ‘ՖՐԱՆԿՈՖՈՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ’ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })